

Միքելի՝ ընթերցող,

Ուղիղ 20 տարի առաջ սեղանիդ հայտնվեց անծանոթ մի գիրք, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նորաստեղծ կառույցի՝ Եփրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի անդրանիկ հատորն էր։ Դու նրան կանաչ ճանապարհ ցանկացար։

Գիտական այս հրատարակության ծնունդը Գյումրիում ջերմորեն ողջունեցին նշանավոր հայագետներ՝ Վաղինիկ Բարխուդարյանը, Լևոն Հախվերդյանը, Արամ Ֆալանթաթյանը, Մարգիս Հարությունյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Մեն Արեշտայանը և ուրիշներ՝ նաև հուսալով, որ ռյուսադրաբանության ակադեմիական կառույցի պատվախնդիր ու հաստատակամ երիտասարդ գիտնականների հանրային ջանքերով ժողովածուն շարունակական կլինի՝ դառնալով հիմնալի առաջին հայագիտական պարբերականը Եփրակի պատմության մեջ։

Այդպես էլ եղավ. Եփրակի Հայագիտական յուրաքանչյուր գիտաշխատողի համար այն ավելին է, քան ինչ-որ ժողովածու, այն իր ինքնության մի մասն է, իր հաջարտությունը, շատերի համար՝ իրենց գիտական կենսագրության սկիզբն ու ընթացքը։ Նրա հատորներում տեղ են գտել Գենտրոնի գիտաշխատողների երեք հարյուրից ավելի հոդվածներ, հրապարակումներ, հաղորդումներ։ Այդ հատորներում «ծյուրընկալվել են» նաև հանրապետության բազմաթիվ անվանի բանագետներ ու ազգագրագետներ, լեզվաբաններ ու գրականագետներ, պատմաբաններ ու հնագետներ, ակադեմիական և բուհական համակարգերի երիտասարդ գիտական կադրեր, արտերկրի շուրջ հինգ տասնյակ հայ և այլազգի գիտնականներ։ Ժողովածուի հաջողվածության զաղտիքը նաև նրա խմբագրակազմի աշխատանքի մեջ է, որում քիչ չեն հանրապետությունում ճանաչված հայագետները՝ Արտ Մելքոնյան, Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Լալիկ Ֆաչատրյան և այլք։

Ժողովածուն եղավ նաև արգասաբեր հարթակ այս բոլոր տարիներին Գենտրոնում իրականացված բառն հրատարակչական գործունեության համար. նրա հիմքի վրա ձևավորվեց «Եփրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարը, և տպագրվեցին նրա՝ ամբողջական ու ավարտուն աշխատանքներ պարունակող առաջին պրակները, շուրջ 3 տասնյակ մենագրություններ, առանձին գրքերով լույս տեսան Գենտրոնի ուժերով Գյումրիում պարբերաբար գումարվող Եփրակի պատմալեզվագիտության ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովների նյութերը։ Ժողովածուն այսօր հայագետների շրջանում վատտակած հեղինակություն վայելող, որոշակի գեղագիտական սկզբունքներ դառնալով ու բարի ավանդույթներ ունեցող հրատարակություն է՝ ընդգրկված ՀՀ ԲՈՂ-ի կողմից ընդունված պարբերական ժողովածուների ցանկում։

Միքելի՝ ընթերցող, այսօր քո սեղանին է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իր քսանամյակը բոլորած Եփրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների ժողովածուի արդեն ջրաներոցը՝ ասել է թե՛ հոբելյանական հատորը։ Իրրն արդարադատ բարեկամ ու անկաշառ ընդդիմախոս՝ նորանոր հատորներ մաղթիր ժողովածուին....

Գլխավոր խմբագիր՝
Դան. ցիտ. ցիտոր Միքո ՀՄՅՐԿԳԵՏՅԱՆ